

## Տ. ՄԱԿԱՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(28 մայիս 2000 թ.)

*«Ես եմ դուռն. ընդ իս եթէ որ մտանիցէ, կեցցէ»:*

(Հովհ. Ժ 9)

*«Ես եմ դուռը. եթե որևէ մեկն Իմ միջով մտնի, կփրկվի»:*

Արդեն քառասուն օր է, ինչ մեր Մայր Եկեղեցու հետ ազգովին փոխախմբում ենք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարությունը: Հարության շրջանի այս վերջին կիրակիին մեկ անգամ ևս խորհենք, թե ո՞րն է այն ճանապարհը, դուռը, արահեպը, որով պարտավոր է անցնել Հայ Առաքելական Եկեղեցու զավակը: Այդ ճանապարհը նրանից պահանջում է ողջ գիտակցության, էության և կյանքի նվիրում: Դա այն իրական, մեր Տիրոջ բնորոշմամբ՝ ճշմարիտ ճանապարհն է, որը դեպի կյանք է փանում: «Ով իմ միջով անցնի, կփրկվի»: Խորախորհուրդ մի արտահայտություն: Ս. Ավետարանում մենք հաճախ ենք հանդիպում այնպիսի խոսքերի, երբ մեր Տերն Իրեն որպես կյանքի միակ աղբյուր է ներկայացնում: Եվ դա իրոք այդպես է: Հիշենք Հովհաննեսի Ավետարանի առաջին փոդերը. «Ամենայն ինչ նովա եղև» («Ամեն ինչ Նրանով եղավ»), ամեն գոյություն Հիսուսի միջոցով եղավ, ողջ փիեզերքը Հիսուսով եղավ, և առանց Նրա այս կյանքում ոչինչ չէր կարող լինել: Եվ այսպես է, որ ամեն ոք, ով անցնում է Հիսուսով, կփրկվի, որովհետև Նա է կյանքի աղբյուրը: Դրա հաստատումն են նաև Ավետարանի այն հիշատակումները, որտեղ մեր Տերը մահացածներին կյանք էր պարգևում, կենդանություն փայլիս:

Երկրորդ կարևոր հանգամանքը որդիության հանգամանքն է: Յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքը, լիճեղությունը պայմանավորվում է նրա որդիությամբ: Գիտենք, որ, ի փարբերություն մյուս կրոնների, քրիստոնեական վարդապետության մեջ առկա է Աստծո և մարդու հարաբերության ընթանական գաղափարը: Դա հենց այն է, որ Սուրբ Պատարագի ընթացքում պատարագիչ հոգևորականը կարդում է. «Դու նրանց Տեր կոչվեցիր, իսկ մեզ բարեհաճեցիր Հայր լինել, և մենք Քո որդիները դարձանք» անչափ կարևոր աղոթքը: Եվ որովհետև մեր Տեր Հիսուս Քրիստոսը կատարյալ որդի եղավ, մեր կենդանությունը պիտի պայմանավորվի Նրա ճանապարհով անցնելու պարտավորությամբ: Սրանից ենթադրվում է երրորդ կարևոր հանգամանքը՝ հավատարմությունը: Մեր Տեր Հիսուս Քրիստոսն Իր առաքելության երեք փառքներին կատարելապես հավատարիմ գտնվեց Իր կոչումին, ինչով և կարողացավ

երկրի վրա Իր կյանքի ավարտին հաղթականորեն ասել. «Ես հաղթեցի աշխարհին»: Եվ մենք, որպես քրիստոնյաներ, որպես Աստծո որդիներ, եթե գիտակցում ենք, որ մեր կյանքի դուռը Հիսուս Քրիստոսն է, պարտավոր ենք մտածել և խորհել հավա-  
պարիմ լինելու մեր որդիական կոչումին, հավապարիմ գտնվելու մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն:

Միրելի հավապացյալներ.

Ահավասիկ սրանք են մեր Տիրոջ այս արտահայտության խորհուրդները: Եվ այսօր, մայիսի 28-ին, երբ ազգովին հիշատակում ենք հայոց առաջին հանրապետության հիշատակի ուրախալի փոքր, եկեք մի պահ մտորենք, թե ո՞րն է մեր լինելության իրական ճանապարհը, ի՞նչ իմաստ ունեն փոքրերը, ի՞նչ արժեն հիշատակությունները, եթե պատմական մեկ անցքի լոկ հիշատակումը պիտի լինեն և զան ու անցնեն, ի՞նչ իմաստ ունի մայիսի 28-ի այս հաղթական ավերիսը:

Դարձյալ հիշենք՝ «Ով Իմ միջով անցնի, կյանք պիտի ունենա»: Մենք պարտավոր ենք ամեն փրկի վերստին նորոգել մեր ուխտը՝ ասելով. «Ով Տեր, Քեզանից հայցում ենք, որ ամուր, անսասան, հաղթական, խաղաղ պահես մեր հայրենիքը, գիտակցում ենք, որ դեպի կյանք, դեպի գոյություն կգնանք միայն Քո ճանապարհն անցնելով, որդիներն ենք Քրիստոսիդ հիմնած Եկեղեցու և միշտ հավապարիմ պիտի լինենք նրան: Միմիայն այսպես ճշմարիտ փրկելը, արժևորողը և ամենայն կարարելությամբ փրկակալը պիտի լինենք մեր հայրենիքի՝ որպես նրա արժանի զավակներ»:

Միրելի հավապացյալներ.

Երբ մեր հերոսների աճյունները բերում ենք Մայր Հայրենիքի հողում վերաթաղելու, ևս մեկ անգամ նրանց օրհնությունը, ուժը, կարողությունը սրանալու, դրանով մեր ուխտն ենք նորոգում մեր Հայրենիքի ու Եկեղեցու հետ, որին պիտի մշտապես ամուր կառնենք:

«Շնորհք, սեր եւ խաղաղութիւն եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսեանսդ. ամէն»: